

## «ԻՐԱՆ ՊԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԵ ՈՐԵՆԵ ԶԱՐՁԱԿՈՒՄԻ, ՆՈՅՆԻՍԿ՝ ՈՉ ԿԱՆԿԱՍՏԱԾՈՒՄԻՆ»

Կ'ԸՍԷ ԽԱՌԴՊԱՏԷ

Իրանի արտաքին գործոց նախարարության բաբներ Սաախտ հաթիպազատ մամլոյ ասուլիսի ընթացքին այլ հարցերու կողքին, անդրադարձած է Լեռնային Ղարաբաղի տագնապին: Այս մասին կը հաղորդէ իրանեան ԻՐՆԱ լրատու գործակալութիւնը: Մեկնաբանելով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած ճգնաժամը, որուն պատճառով երբեմն հրթիռներ կ'իջան Իրանի որոշ շրջաններու մէջ, ան նշած է, որ ժողովուրդի անվտանգութիւնը Իրանի համար կարմիր գիծ է: Խաթիպազատի համաձայն՝ Իրանի զինեալ ուժերը անհրաժեշտ զգուշացումները արդէն փոխանցած են: «Իրան պիտի պատասխանէ որեւէ յարձակումի, նոյնիսկ՝ ոչ կանխամտածուածին», յայտարարած է Իրանի արտաքին գործոց նախարարութեան բաբները:

1500 Լ.Ո. 94-րդ ՏԱՐԻ, ԹԻՒ 179 (26451) ԵՐԵՎԱՆԻ, 20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020 4 ԷՋ

### ՓՈՍՓՈՅԻ ՅԵՏ ՅԵՈԱԶԱՅՆԱՅԻՆ ԶՐՈՅՑԻ ԸՆԹԱՅԵՒՆ՝

## «ԼԻԲԱՆԱՆ ԶԱՆՉՆԱՌՈՒ ԿԸ ՄՆԱՅ ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԶԱՄԱՔԱՅԻՆ ԻՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒՆ, ՆԱԵՒ ԳԵՐԻՇԵՆԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԻՆ»

ՇԵՇՏԵՑ ՆԱԿԱԳԱՅ ԱՌՆ

Հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն երկէ երեկոյեան Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփեյտի հետ հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին քննարկեց լիբանանեան-ամերիկեան երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ ծովային եւ ցամաքային սահմանազօնմի բանակցութիւններուն վերաբերող մանրամասնութիւնները:



Շար.ը՝ էջ 2

### ԱԶԻՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ԶԱՐՁԱԿՈՒՄԻՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ՈՒՏԳԻՆ ՀԱԿԱԶԳԵԼ

## ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆ ԵՒ ԻԼՀԱՄ ԱԼԻԵՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆ ԶԱՅՏՆԱԾ ԵՆ ՀԱՆԳԻՊԵԼՈՒ

Երեկ՝ երկուշաբթի, 19 հոկտեմբեր 2020-ին ԹԱՍՍ լրատու գործակալութեան հետ հարցազրոյցներու ընթացքին թէ՛ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան, թէ՛ Ազրայէճանի նախագահ Իլհամ Ալիեւ նշած են, որ պատրաստ են հանդիպիլ՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ուղիներ գտնելու համար: Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ Ազրայէճանի նախագահ Իլհամ Ալիեւ պատասխանեցին, Ռուսիոյ միջնորդութեամբ, Մոսկուայի մէջ հանդիպելու պատրաստակամութեան վերաբերող հարցումին:



Ռոլ հարցումին: «Պատրաստ էք երթալ Մոսկուա, որպէսզի հանդիպում ունենաք ձեր պաշտօնակիցին հետ՝ Ռուսիոյ միջնորդութեամբ», հարցուցած է լրագրողը: Փաշինեան պատասխանած է. «Ես արդէն ըսի՝ մենք միշտ ըսած ենք, որ Լեռնային Ղարաբաղի հարցը պէտք է լուծուի բացառապէս խաղաղ ճամբով: Ցաւօք, Ազրայէճանն է, որ համաձայն չէ այս տեսակետին: Մեր դիրքորոշումն է, որ Լեռնային Ղարաբաղի տագնապը պէտք է լուծուի բացառապէս խաղաղ ճամբով: Եւ ես պատ-

Շար.ը՝ էջ 2

## ՄՓԻՌՔԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՐՑԱՆԻ ԿՈՂՔԻՆ ԵՒ ԱՆՈՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒՆ ՊԱՀԱՆՁԱՏԵՐ

Սփիւռքի հայրութիւնը կը շարունակէ Արցախին ու արցախահայութեան զօրակցող, ազրայէճանական-արցախեան սահմանագոտիին մէջ Ազրայէճանի սանձազերծ յարձակումները դատապարտող եւ իրենց ապրած երկիրներէն այս բոլորին արձագանգել պահանջող ցոյցերը, հաւաքները եւ տարբեր նախաձեռնութիւնները:



- Սուրիոյ երիտասարդական միութեան կազմակերպութեամբ, կիրակի, 18 հոկտեմբերին աւելի քան 1500 հալէպահայեր հաւաքուեցան Ազգային Քարէն Եփէի ճեմարանի շրջափակը՝ Հալէպէն իրենց զօրակցական կոչը ուղղելով Արցախի անկախ հանրապետութեան, անոր յաղթական բանակին ու ժողովուրդին:

«Արցախը Հայաստան է», «Պիտի յաղթենք», «Ճանաչում Արցախի Հանրապետութեան» կոչերով հարիւրաւոր երիտասարդներ, պատանիներ բեմ բարձրանալով խոստում տուին որպէս նորախառ սերունդներ իրենց բոլոր կարեւորութիւններով զօրավիգ կանգնելու Արցախին:

Շար.ը՝ էջ 3

### ՓՈՍՓՈՅՈՒ ՈՒՎՇԻՆԿԹԵՆԻ ՄԵՋ ՀԱՆԳԻՊՈՒՄ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶԻՐՊԵՅՃԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՀԵՏ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփեյտի հոկտեմբեր 23-ին Ուաշինկթընի մէջ առանձին հանդիպումներ պիտի ունենայ Հայաստանի արտաքին գործոց նախարար Զորաբ Մնացականեանի եւ Ազրայէճանի արտաքին գործոց նախարար Ժեյ-հուն Պայրամովի հետ: Այս մասին կը հաղորդէ «Փոլիթիք» կայքը:

Շար.ը՝ էջ 4

### «ՄՓԻՌՔԸ ԿԱՐԵՒՈՐ ԴԵՐ ՈՒՆԻ ԱՐՑԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՄԵՋ»

ԱՐԱՄ Ա. ԿԱԾՈՂԻԿՈՍ

Արամ Ա. Կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերուն ուղղած իր շնորհաբերական նամակին մէջ շեշտեց. «Արցախի միջազգային ճանաչման ժամը հնչած է: Յ ա տ կ ա պ է ս սփիւռքը, իր քարոզչական ու յարաբերական լայն



Շար.ը՝ էջ 3

**ՅԻՐԱՍԱԿԱՆ ԵՐԿՈՒՒ ԲԱՂԱՔՆԵՐ ԿԸ ՃԱՆՉՆԱՆ ԱՐՑԱՆԻ ԱՆԿԱՏՈՒԹԻՒՆԸ**

Ֆրանսական Լիմոնէ եւ Վիեն քաղաքները ճանչցան Արցախի Հանրապետութիւնն ու անոր անկախութիւնը: Լիմոնէ քաղաքի համայնքային խորհուրդը միաձայնութեամբ քուէարկեց անկախութեան ճանաչման օգտին:

### «ՈՒՍԻԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒ ԱԶԻՐՊԵՅՃԱՆԸ ԿՐԱՆ ՍՕՏԻԿ ԱՊԱԳԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԻ՝ ԸՐՁԱՆԻՆ ՄԵՋ ԿՐԱԿՈՑԻ ԴԱԴՐԵՑՄԱՆ ՎԵՐԱՅՍԿՄԱՆ ՄԵՆԱՆԻՉՄԻ ՇՈՒՐՁ»

Կ'ԸՍԷ ԼԱՐՈՎ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով՝ անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի տագնապին, յայտարարած է, թէ Ռուսիան, Հայաստանն ու Ազրայէճանը կրնան ամենէն մօտիկ ապագային համաձայնութիւն գոյացնել տարածաշրջանին մէջ կրակոցի դադարեցման վերահսկման մեքանիզմի շուրջ: ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը

կը հաղորդէ, որ Լաւրով այս մասին յայտնած է Եւրոպական խորհուրդի ընդհանուր քարտուղար Մարիա Փելչի-նովիչ Պուրիչի հետ հանդիպումէն ետք անոնց տուած մամլոյ ասուլիսի ընթացքին: «Որպէսզի կրակոցի դադարեցումը գործէ, մենք արդէն համոզուած ենք, Կ'ԸՍԷ ԹՐԱՍՓ

Շար.ը՝ էջ 3

### ՀՅԴ ԱՐՑԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆՎԱՄՆԵՐԸ ՀԱՆԳԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՅԻԿ ԶԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆԻՆ ՀԵՏ



«Ապառաժ» կը տեղեկացնէ, թէ 19 հոկտեմբերին ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի անդամները հանդիպում ունեցած են Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեանին հետ: Հանդիպումին ընթացքին քննարկուած է Արցախի ներքին իրավիճակը, ռազմաճակատի առկայ իրադրութիւնը: Յատուկ անդրադարձ կատարուած է տիրող իրավիճակին մէջ կրակոցի բեկում մտցնելու հնարաւորութիւններուն:

### «ԹՈՒՐԵՈՅ ՅԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԹԱՅԵՒՆ ՈՒՍԻԱՆ Կ'ԱՐՇԱՐԾԵ ԱՐԱԲԵԿԻՉՆԵՐՈՒ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂ ՏԵՂԱՓՈՒՍԱՆ ՀԱՐՅՈՒՆ»

Կ'ԸՍԷ ՊՈԿՏԱՆՈՎ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը թրջական կողմին հետ հաղորդակցութիւններու ընթացքին կ'արձարծէ Սուրիայէն եւ Լիպիայէն Լեռնային Ղարաբաղի տագնապի գոտի ահաբեկիչներ տեղափոխելու հարցը: ԹԱՍՍ կը հաղորդէ, որ այս մասին լրագրողներուն յայտնած է Ռուսիոյ նախագահի Միջին Արեւելքի եւ Աֆրիկէի հարցերով յատուկ պատուիրակ, Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Միխայիլ Դուկոսովը: «Մենք կը քննարկենք բոլոր հարցերը», ըսած է ան՝ պատասխանելով համապատասխան հարցումին:

Պատասխանելով այն ճշողո հարցումին, թէ արդեօք ռուսական կողմը հաղորդակցութիւններու ժամանակ կ'ընդօժէ՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի գոտի ահաբեկիչներ տեղափոխելու անընդունելիութիւնը՝ Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարարը հաստատած է՝ «Ի հարկէ»:

### Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՅՅԵԼԵՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի երեկ՝ 19 հոկտեմբերին այցելեց հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աունի:

45 վայրկեան տեւած հանդիպումին ընթացքին քննարկուեցան խորհրդակցութիւններու յետաձգման լոյսին տակ ստեղծուած կարելիութիւնները: Հանրապետութեան նախագահը հաստատեց, որ յառաջիկայ հինգշաբթի խորհրդարանական պարտագիր խորհրդակցութիւնները տեղի պիտի ունենան, եւ ներկայացուց այն դժուարութիւնները, որոնք պատճառ դարձան նախորդ հինգշաբթի օր նախատեսած խորհրդակցութիւններու յետաձգման՝ նշելով, թէ այդ խնդիրները տակաւին չեն հարթուած: Երեսփոխան Յակոբ Բագրատունի նաեւ նախագահին հետ քննեց կառավարութեան կազմութեան կարելիութիւնները՝ անհրաժեշտ նկատելով առաւելագոյն ճիգ ի գործ դնել ապահովելու յառաջացումը ներկայ փուլին համապատասխան փրկութեան կառավարութեան մը, որ պէտք է պայմաններէ եւ փոխադարձ պայմաններէ հեռու ըլլայ:

### ԲԱՐՍԸՆ ՍԻԹԻ ՄԵՋ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԵՒ ԸՆԹԱՅԵՒՆ «ՀԱՅՅԵՐԸ ԼԱՒ ՄԱՐԴԻԿ ԵՆ, ԿԸ ՆԱԿԱՆՁԻՄ ԱՆՈՆՅ ՈԳԻՆ, ՊԻՏԻ ԱՇԵԱՏԻՆՔ ՈՐՈՇ ՈՒՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ»

Կ'ԸՍԷ ԹՐԱՍՓ

Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի Նեւատա նահանգի Քարսըն քաղաքի մէջ ընտրական հաւաքի մը ընթացքին, այլ հարցերու կողքին, խօսած է նաեւ հայերու մասին: Թրամփ՝ հանրահաւաքի բազմութեան մէջ հայկական դրօշներ պարզած ամերիկահայերը նշմարելով՝ ըսած է. «Հայերը լաւ մարդիկ են, կը սիրեն իրենց երկիրը, նաեւ՝ հիմնալի գործարարներ, ի դէպ: Հոս եկած



ատենս, ճամբան տեսայ՝ բազմաթիւ հայեր գեղեցիկ դրօշներով կանգնած: Ես կը նախանձիմ ձեր ոգիին, հայերը հզօր ոգի ունին իրենց երկրի

Շար.ը՝ էջ 4

ՊԵՐՐԻՔ «ՊԵՅՐՈՒԹԻ ՆԱԽԱԿՆԵՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՅԹՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՎԷՐՔ ՄԸ ՊԱՏՃԱՍՏԵՐ Ե ԵՒ ԶԱՅՆ ԿԱՐԵԼԻ Ե ԱՄՈՔԵԼՔ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՍԿԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԵՌՈՒ ՊԱՋԵԼՈՎ ԵՒ ԱՐԳԱՐ ՀԵՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՎ»



Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորի այսօր ԵՐԵՎԱՆԻ-ի պալատին մեջ պիտի նախագահի խորհրդարանի լիագումար նիստին: Մինչ այդ, Պրորի երեկ Այն Թիսեի մեջ ընդունեց Պեյրուքի նախահանգիստի պայթյունի պատճառով զոհուած նահատակներուն ընտանեկան պարագաները ներկայացնող պատուիրակութիւն մը: Գնահատուած ընթացքին Պրորի հաստատեց, որ խորհրդարանը պատրաստ է օրէնսդրական ամեն ջանք ի գործ դնելու՝ արդար հաստատուած ապահովելու համար Պեյրուքի նախահանգիստի պայթյունի նահատակներուն ընտանիքներուն եւ պայթուածն անցկացնողներուն:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԾՆԵՐՈՒՆ ԹԻՐԸ ԶԱՍԱԻ 62.944-Ի, ԻՍԿ ՄԱՅՐՈՒՄՆ ԳԱՐԱԳԱՆԵՐՈՒՄԸ՝ 526-Ի

Առողջապահութեան նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, երեկ Լիբանանի մէջ «Քորոնա» ժահրով վարակուածներուն թիւը հասաւ 62.944-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 995 նոր վարակուածներ, որոնցմէ 937-ը՝ տեղացիներ, իսկ 58-ը՝ Լիբանան ժամանած քաղաքայիններ:

Առողջապահութեան նախարարի պաշտօնակատար Գամատ Գասան երեկ շարունակեց դեղորայքի պահեստանոցներ տուած իր այցելութիւնները: Այս շրջագիծին մէջ ան այցելեց Զարանիայի դեղորայքի պահեստանոցը եւ հաստատեց, որ իրենք կը ընեն բոլոր այն պահեստանոցները, ուր ապահովութեան ուժերը դեղորայքի տեսականի կը բացայայտեն:

Այս ծիրին մէջ ժուկի եւ Զեյրուա-Լի առեւտրականներու միութիւնը հաստատեց իր մերժումը՝ ժուկի եւ Զեյրուա-Լի շուկաները փակ պահելու որոշման:

Գասան Նշեց, որ լիբանանցի ժողովուրդը դեղորայքի հսկայական տեսականի մթերած է բնակարաններուն մէջ՝ դեղորայքին յատկացուած պետական նպաստին կասեցումին պատճառով:

Միութիւնը դիտել տուաւ, որ այդ որոշումը գործադրելու պարագային բոլոր վաճառատուները սնանկացումի ենթակայ կրնան ըլլալ: Միութիւնը ընդգծեց, որ ինք կը մերժէ զոյգ շրջաններու շուկաները փակ պահել՝ կոչ ուղղելով աւելի արդիւնաւէտ միջոցներու դիմելու՝ «Քորոնա» ժահրով վարակուելու ընթացքը կասեցնելու համար:

Գասան ընդգծեց, որ այս այցելութիւններուն միջեւ դեղորայքի արդար բաժանում ապահովել՝ շեշտելով, որ դեղորայքի առնչութեամբ իւրացում կատարող ու սխալողն պիտի պատժուի, նոյնիսկ եթէ ան առողջապահութեան նախարարութեան պաշտօնէտներէն է:

Նշեց նաեւ, որ Լիբանանի մէջ ռուսական ղեսպանատան մօտիկ աղբիւրներ հաստատեցին, որ Մոսկուա պատրաստ է «Քորոնա»-ի յատուկ պատուաստը տրամադրել Լիբանանին՝ աւելցնելով սակայն, որ այդ մէջը կատարելու համար լիբանանեան եւ ռուսական պետութիւններուն միջեւ պաշտօնական համագործակցութիւն պէտք է ըլլայ:

Նախարարի պաշտօնակատարը ասելով, որ բացայայտուած են բազմաթիւ պարագաներ, երբ մահացած անձերուն հարազատները կը շարունակեն ստանալ հանգուցեային հասնող դեղորայքը ու գաւնոք կը վաճառեն:

Ան հաստատեց, որ քաղաքական ուժերը կը մերժեն դեղորայքին տրամադրուած պետական նպաստի կասեցումը, յատկապէս Նկատի ունենալով նուազագոյն աշխատավարձի անփոփոխ մնալու իրավիճակը, որովհետեւ այդ նպաստը կասեցնելու պարագային երկիրը մարդկային եւ առողջապահական աղետի պիտի մատուցի:

ՈՒՍԱՄ ԶԱՍԱՆԻ ՆԱԶԱԿՈՒԹԵԱՆ Ը. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ ՕՍՍԱՆ Կ'ԱՅՑԵԼԵ ԶԱՍԱՆԻ ԴԱՄԱՐԱՆԸ

Ներքին ապահովութեան ուժերու տեղեկահաւաքի բաժանմունքի նախկին ընդհանուր տնօրէն հազարապետ-գորավար Ռիսամ Զասանի նախատեսութեան Ը. տարելիցին առիթով, երեկ ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն հազարապետ-գորավար Իմատ Օսման այցելեց Զասանի դամբարանը, ուր ծղղկեպսակ մը գետնէն:



Միւս կողմէ, նախկին վարչապետ Սատար Գարիբի յայտնեց, որ Ռիսամ Զասան եղած է Լիբանանի ապահովական կայունութեան հիմնաստիններէն մէկը՝ իր կենսը նուիրելով Լիբանանի ապահովական կայունութեան պահպանման:

«ԼԻԲԱՆԱՆ ԶԱՆՁՆԱՌՈՒ ԿԸ ՄՆԱՅ ԾՈՎԱՅԻՆ...»

Զեռածայնային գրոյցին ընթացքին նախագահ Անու Նորիակալութիւնի յայտնեց Փոմփեյնի՝ սահմանագծումի բանակցութիւններու շրջագիծին մէջ Միացեալ Նահանգներու խաղցած միջնորդի դերակատարութեան համար: «Լիբանան յանձնառու կը մնայ ծովային եւ ցամաքային իր իրաւունքներուն, նաեւ գերիշխանութեան պահպանումին», հաստատեց նախագահ Անու: Իր կարգին Փոմփեյն յայտնեց, որ Միացեալ Նահանգներ օժանդակութիւններ կ'առաքեն Լիբանանին՝ վերականգնելու համար այն փողոցները, որոնք քանդուած էին 4 օգոստոսի

Պեյրուքի նախահանգիստին պայթյունի պատճառով: Նշեց, որ կառավարութեան կազմութեան շրջագիծին մէջ նոր վարչապետ մը նշանակելու նպատակով Պասպայի մէջ հինգշաբթի օր կայանալիք երեսփոխանական պարտագիր խորհրդակցութիւնները առկա են: Միւս կողմէ, սակայն, խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորի մօտիկ աղբիւրներ յայտնեցին, որ կառավարութեան կազմութեան թղթածրարը կը մնայ մշուշոտ՝ նկատի ունենալով, որ հաղորդակցութիւնները կանգ առած են. բայց եւ այնպէս ան յոյս յայտնեց, որ այս շաբթուան ընթացքին անոնք վերաշխուժանան:

ՊԵՅՐՈՒԹԻ ԶԱՂԱՔԱԿՆԵՐՈՒՄՆԵՐԻ ԹԱՐԻՔ ԺՏԻՏԵՆ ԶԵՆԱՑՈՒՅ ԶՐԴԵՅ ԲՈՆԿԵՑՆՈՂ ՆԱԽԹԱՅԻՆ ՆԻԹԵՐ

Պեյրուքի քաղաքապետարանը երեկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ հաստատուեցաւ, որ, Պեյրուքի նախահանգիստի Մարուան Ապպուտի հրահանգին ընդառաջելով, Պեյրուքի հրշէջներու բաժանմունքն ու Պեյրուքի պահակազունը կատարած են հսկողութեան ընդհանուր արշաւ մը, որուն շրջագիծին մէջ Պեյրուքի Թարիք ժոյտը շրջանին մէջ գտած են պենզինի եւ կազի շտեմարաններ, որոնք գետնուած էին ստորերկրեայ պահեստանոցի մը մէջ:

Յաղորդագրութիւնը կը նշէ, որ վառելանիւթի պահեստանոցը կը գտնուէր «Մաքսետ» հիւանդանոցին հանդիպակաց շրջանին մէջ գտնուող բնակարանային համալիրի մը կողքին: Վառելանիւթը գետնուած էր 5 կերպընկալէ տակառներու մէջ՝ իւրաքանչիւրը 180 լիթր, ինչպէս նաեւ երկաթե տակառի մը մէջ՝ 225 լիթր:

Պահեստանոցին մէջ չկան այդ վառելանիւթը պահելու նուազագոյն չափանիշները, հետեւաբար Պեյրուքի հրշէջներու բաժանմունքն ու Պեյրուքի պահակազունը այդ շրջանէն հեռացուցին հրդեհ բռնկեցնող նախարարի նիւթերը:

Նշեց, որ Պեյրուքի նախահանգիստի Մարուան Ապպուտ երեկ երեկոյեան հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն հիման վրայ վառելանիւթ պահելը կ'արգիւտի:

«ԱԶԳԱԿ»-Ի ՖՈՆՏԻՆ
• Զրայր Սողոմոնեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի՝ Տէր եւ տիկին Ալեքքո եւ Անի Պեգիբեան 5.000.000 լ.ո.
• Դուկո. Յարութիւն Սամուէլեանի մահուան առիթով՝ «Ճորճի Սապունճեան» ընկերութիւն 250.000 լ.ո.

Կ'ՈՒԶՈՒԻ
Վարպետ ոսկերիչ մը՝ ձեռային աշխատանքի համար: Գեռ. 01-266514 կամ 03-207772:
«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՆԱՊԱՅՆԻ ԹԻՒՆԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-Ի հետ կապուելու համար հեռաձայնիկ հետեւեայ թիւերուն:- (01)258526, (01)260115 եւ (01)241274:

ԱԶԳԱՅԻՆ ԹԱՂՈՒՄ
ՀՐԱՅՐ ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ
Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային ընդհանուր ժողովի ատենապետ եւ Ազգային բարերար ՀՐԱՅՐ ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ թաղման արարողութիւնը տեղի պիտի ունենայ երեքշաբթի, 20 հոկտեմբեր 2020-ի կէսօրուան ժամը 12:00-ին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ:
«Քորոնա» ժահրի համաճարակին պատճառով հանգուցեալի ընտանիքը ցուակցութիւնները պիտի ընդունի հեռաձայնով.- +9613513061 եւ + 971507084979 թիւերուն:
Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել «Արցախ ֆոնտ»-ին:
ԴԻՄԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆ ԵՒ...

Շարունակուած Ա. Էջնի

րաստ եմ ներդրելու անհրաժեշտ ջանքերը՝ նման արդիւնքի հասնելու համար, այդ կարգին՝ երթալ, հանդիպիլ, խօսիլ: Բայց մենք բոլորս պէտք է հասկընանք, որ լուծումը պէտք է հիմնուած ըլլայ փոխգիշտումի վրայ: Ի միջի այլոց, եթէ հակառակ կողմէն չկայ փոխգիշտման պատրաստակամութիւն, մենք պատրաստ ենք պայքարելու մինչեւ վերջ՝ Լեռնային Ղարաբաղի մեր ժողովուրդին իրաւունքին, մեր հարեւակիցներուն իրաւունքներուն համար: Արկա Զայաստանի կառավարութեան, Զայաստանի ժողովուրդին, հայկական սփիւռքին դիրքորոշումն է: Եւ ես կը կարծեմ, թէ ասիկա ազնիւ եւ կառուցողական դիրքորոշում է»:

ԹԱՍՍ-ի լրագրողի նոյն հարցումին Ազրպեյճանի նախագահը իր կարգին պատասխանած է, որ Պաշտօն պատրաստ է հայկական կողմին հետ Լեռնային Ղարաբաղի հարցով բանակցութիւններու: Մոսկուայի մէջ կամ այլուր:

«Մենք միշտ պատրաստ ենք հանդիպում ունենալու Մոսկուայի եւ որեւէ այլ քաղաքի մէջ, որպէսզի վերջ դնենք դիմակայութեան եւ գտնենք լուծման ուղիներ», ըսած է Ալիեւ:

19 հոկտեմբերին Զայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան գլխաւորեց Անվտանգութեան խորհուրդի արտահերթ նիստին, որուն, բացի Անվտանգութեան խորհուրդի անդամներէն, մասնակցեցան նաեւ Զայաստանի նախագահ Արմէն Սարգսեան, Ամենայն Զայոց Քարեգին Բ. կաթողիկոս, Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցութեան ղեկավար Լիլիթ Մակունց, Լուսաւոր Զայաստանի խմբակցութեան ղեկավար Էտմին Մարութեան, Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի նախագահ Ռուբէն Ռուբինեան, Աժ պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ Աղդարիկ Զեյրեան, «Բարգաւաճ Զայաստան» խմբակցութեան ներկայացուցիչ, պատգամաւոր Արման Արզուման:

Նիստին, որ սկսաւ Ամենայն Զայոց կաթողիկոսին աղօթքով, քննարկուեցան ազրպեյճանաթրքական յարձակումին իբրեւ հետեւանք Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած իրավիճակն ու թշնամիին հակազդելու ուղղութեամբ իրականացուող քայլերը:

19 հոկտեմբերին Զայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան հանդիպում ունեցաւ արտախորհրդարանական ուժերու ներկայացուցիչներուն հետ: Վարչապետը անդադարձաւ ազրպեյճանական-թրքական յարձակումներուն իբրեւ հետեւանք ստեղծուած կացութեան եւ հայկական կողմին քայլերուն ու գործողութիւններուն, նաեւ պատասխանեց ներկաներուն հարցումներուն:

Զանդիպումին մասնակցեցան Զանրապետական կուսակցութեան խօսակէ Էդուարդ Շարմազանով, ԶՅԳ Գերագոյն ժամնի ներկայացուցիչ Իշխան Սարգսեան, «Իմ քայլը» խմբակցութեան ղեկավար Լիլիթ Մակունց, պատգամաւոր Արման Արզումանեան, Զաղաքացու որոշում կուսակցութեան գործադիր մարմնի քարտուղար Սուրէն Սահակեան, Զայ ազգային քննկրեւ կուսակցութեան փոխնախագահ Լեւոն Չուրպեան եւ այլն:

Արցախի Զանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեան 19 հոկտեմբերին ընդունեց Տաւուշի թեմի առաջնորդ Բագրատ Եպս. Գալստեանեանի զըլխաւորած պատուիրակութիւնը: Այս մասին յայտնեցին Արցախի Զանրապետութեան նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչու-թեմալ:

Երկրի ղեկավարը իր երախտագիտութիւնը յայտնեց թեմակալ առաջնորդին՝ պատերազմական այս ծանր ժամանակաշրջանին Արցախի մէջ գտնուելուն եւ իր աջակցութիւնը բերելուն համար՝ ընդգծելով, որ պատմութեան ընթացքին հայ եկեղեցին միշտ եղած է ժողովուրդին եւ իշխանութեան կողքին, յատկապէս օրհասական պահներուն միասին յաղթահարած են բոլոր դժուարութիւնները:

Բագրատ Եպս. Գալստեանեան նախագահին փոխակցեց Ամենայն Զայոց Քարեգին Բ. կաթողիկոսին օրհնութեան խօսքը եւ նշեց, որ, անկախ ստեղծուած իրավիճակէն, հաւատացած է, որ Աստուծոյ զօրութեամբ եւ ազգային միասնական ջանքերով կրկին կարելի պիտի ըլլայ շրջանցել նետուած մարտահրաւերը եւ պատուով յաղթահարել Ազրպեյճանի կողմէ ասանագործուած յանցարար պատերազմի փորձութիւնը:

Զայաստանի Զանրապետութեան պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեան տեղեկացուց, թէ Արցախի եւ Ազրպեյճանի հակամարտութեան զօրքերու շփման գիծին մէջ 19 հոկտեմբերին երեկոյեան մարտական գործողութիւններու ուժգնութիւնը որոշ չափով նուազեցաւ:

Երեկ, 19 հոկտեմբերին Արցախի Զանրապետութեան նախագահի մամլոյ բանբեր Վահրամ Պօղոսեան դիտել տուաւ, որ հիւսիսային ուղղութեամբ թըշնամին կենդանի ուժի զգալի կորուստներ ունեցած է, իսկ հարաւի մէջ ծանր մարտեր ծայր առած են օրւան ընթացքին: Վերջին տուեալներուն համաձայն, ազրպեյճանական կազմը պատերազմի ընթացքին արդէն կորսնցուցած է 195 անօդային թռչող սարք, 16 ուղղաթիւ, 22 ինքնաթիւ, 566 միաւոր գրանամեքենայ, 4 SOU համազարկային կրակի ծանր հրետանային համակարգ եւ ունեցած է անձնակազմի 6259 կորուստ:

Արցախի մարդու իրաւունքներու պաշտպան Արտակ Բեգլարեանի կարծիքով՝ միջազգային կառոյցներու եւ կազմակերպութիւններու յայտարարութիւնները Արցախի մէջ ստեղծուած իրավիճակի վերաբերեալ, արդիւնք չեն տար որովհետեւ, յստակ գործողութիւններ անհրաժեշտ են:

Ըստ Բեգլարեանի՝ միջազգային կառոյցները պէտք է յստակ քայլերու դիմեն կազմակերպեց այցելութիւններ, արձանագրութիւններ կազմեն, պատժամիջոցներ կիրարկեն:

ԱՐՑԱԿԵԱՆ ՅԱՐՁԱՆԱԿԻՆ ՏԵՍԻԼԵՈՎ...

ԱՐՈՁԵՆ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ



Սիրելի՛ ընթերցող, սիւնակիս վերնագիրն է. «Արձաքն ու պատերազմը»:

Ինչո՞ւ համար ընտրությունն այս կտորին, որ տարուան մեջ մեկ անգամ կը կարդացուի, եւ այն՝ Մեծ պահքին առաջին օրը...:

Մեծ պահքին առաջին օրը կը տրուի մեզի այս ընթերցումը, որպէսզի, ինչպէս Յիսուս ապրեցաւ աղօթքով, պահքով եւ ծովով, մենք ալ նոյնը ապրինք:

Թեպէտ այսօր մեծ պահքը չի սկսիր, բայց եւ այնպէս քեզի համար ընտրեցի Տիրոջ խօսքն այս հատուածը, որպէսզի քեզի ներկայացնեմ աղօթքի ու պայքարի Յիսուսը:

Այո՛, Յիսուս աղօթք է պայքարեցան սատանային դէմ: Հոգեմտաւոր պատերազմ էր, որուն ընթացքին երեք ճակատամարտ մղելով դեմին դէմ՝ յաջողութեամբ տարաւ ու յաղթութեամբ պակեց՝ իր հետեւորդներուն սորվեցնելով եւ հասկնելով, թէ հարկ է մարտնչիլ դժոխային յարձակումներուն դէմ:

Այսօր, երբ հայերս կ'ենթարկուինք դժոխային յարձակումներուն եւ մեր հայրենիքին դէմ բացուած անարդար պատերազմով կը պարտադրուինք սրբազան ինքնապաշտպանութեան, այսօր առաւել եւս պարտաւոր ենք հետեւիլ աղօթքի ու պայքարի մեր Աստուծային Վարդապետին, ինչպէս Անոր հետեւեցան մեր նախահայրերն ու նախամայրերը՝ պաշտպանելով իրենց երկիրը եւ նոյնիսկ գոհելով իրենց կենսը:

Հայոց պատմութիւնը լեցուն են դէմքերով եւ դէպքերով, որոնց մէջ աղօթքն ու պատերազմը անբաժանելի են իրարմէ, եւ, ուստի, յաղթանակը ի վերուստ կը տրուի ջերմ աղօթողներուն ու արդար պատերազմը մղողներուն: Անա՛ր՝ քեզի միայն հինգ դրուակներ:

Առաջին դրուակը: Մեր քրիստոնէացումէն արդէն 10 տարի ետք, 311-ին՝ Մաքսիմոս Դաժա կեսարին հանած սարսափելի հալածանքներէն յաղթանակ ելանք հոգեմտաւոր պատերազմով՝ շնորհիւ մեր հաւատքին հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչին (257-331) աղօթքին եւ օրհնութեան:

Երկրորդ դրուակը: Պարսիկներուն դէմ 371-ին տեղի ունեցած Ձիրաի ճակատամարտը շահեցանք պատերազմող Մուշեղ Մամիկոնեանի հրամանատարութեամբ, բայց մահաւանդ Մեծ Ս. Ներսէս Ա. (329-373) կաթողիկոսին բազկատարած աղօթքին շնորհիւ՝ Նպատ լերան վրայ:

Երրորդ դրուակը: «Աստուած-հայրենիք, Կրօն-ինքնութիւն, հաւատք-հող, համոզում-պարուն, գիտակցութիւն-դաւանում, ազգասիրութիւն-ինքնապաշտպանութիւն, արժանապատուութիւն-ինքնագոհութիւն» իւրեւելով օժտուած, ինչպէս նաեւ Ս. Խաղորդութեամբ, հսկում-աղօթքով ու Ս. Գիրքով գինուած՝ Վարդանանք 451-ին եւ Ղեւոնդեանք 454-ին փրկեցին մեր հայ քրիստոնականութիւնը, կամ՝ մեր քրիստոնէայ հայկականութիւնը:

Չորրորդ դրուակը: Ինչպէս Վահան Մամիկոնեանի ռազմավարութեամբ ու Տ. Յովհաննէս Ա. Մանդակունի (410-490) հայրապետին աղօթքով եւ հսկումով՝ 484-ի «Նուարակի դաշինքը» պարտադրեցինք, նոյնպէս այսօր, 2020-ին՝ մեր աղօթքով ու հսկելով կը պարտադրենք մեր յաղթանակը:

Հինգերորդ դրուակը: Գիրս անելի չերկարելու համար, հոս, պատմագրական ոտուով ընելով՝ քեզի կը յիշեցնեմ Չաքարէ եւ Իւանէ Չաքարեան եղբայրներուն՝ հայ-վրացական բանակին աղօթող ու պատերազմող զօրավարներուն վերահաստատած սովորութիւնը, զոր այսօր ալ գործադրելու են մեր պետական եւ գիւտարական պատասխանատուները, անպայման՝ ու անյայտա՛ր:

Իրենց հոգեւոր վարիչին՝ հռչակաւոր կանոնագետ Մխիթար Գոշ (1130-1213) վարդապետին հաւանութեամբ՝ Չաքարէ Սպասալարը, որուն մասին պատմագիրը կը վկայէ, թէ «մեծափառ եւ բոլոր առաքինութիւններով լի մարդ էր, յաղթող, քաջ եւ զօրեղ մարտիկ եւ հաւատով հայ» անձնաւորութիւնն էր, իրենց հետ կը տանէր շարժական խորան մը, որպէսզի ռազմաճակատէն առաջ Ս. պատարագը մատուցանէ տար եւ Ամենասուրբ Հաղորդութեամբ արիացած ու աղօթքով զրահուած՝ սկսէր ճակատամարտի:

Այսպէս, յաղթական քսանամեայ պատերազմներով, 1190-1212 տարիներուն, Չաքարէ եւ Իւանէ Չաքարեան սելճուկեան ամիրութիւններէն կրցան ազատագրել Հայաստանի կենտրոնական ու հարաւային տարածաշրջանները, որոնց մէջ էին մեր պատմական հայրենիքին Գանձակ, Արցախ եւ Սիւնիք նահանգները:

Դուն, ան եւ տե՛ս՝ մենք դառնանք կիրակւօրեայ ընթերցումին Աստուծամարդ Հերոսին՝ Անկէ սորվելու համար թէ՛ աղօթել, եւ թէ՛ պայքարիլ, որպէսզի, ինչպէս Յիսուս հիմը դրաւ իր հաշմամահին յաջողած Յարութեան գաղտնական յաղթանակին, նոյնպէս հայերս աղօթքին ու պայքարին շնորհիւ՝ մեր արդար ինքնապաշտպանութեան խորանին վրայ գոհաբերած նահատակութեան յաջորդէ հայրերու փառապանծ յաղթութիւնը:

Այո՛, պիտի յաղթանակենք: Գիտե՛ս պատճառը...: Զանի հայերս Մարիամի՝ աղօթքի ու պայքարի՛

ՄԵՏՐՈՂ ՀԱՅՈՒՆԻ Շար.ը՝ էջ 4

ՄՓԻՌ-ՔԱՅԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ԱՐՅԱԽԻ...

Շարունակուած Ա. Էջէն

- Ուրուկուեյի մայրաքաղաք Մոնթվիդեոյի մէջ 18 հոկտեմբերին ինքնաշարժներու հսկայ երթ տեղի ունեցաւ՝ խաղաղութեան եւ Լեռնային Ղարաբաղը ճանկարու պահանջով:



Լատին-ամերիկեան երկրին մէջ բնակող հայ համայնքի ներկայացուցիչները պահանջեցին դատապարտել Ազրայեյեանի եւ Թուրքիոյ յարձակումները, ինչպէս նաեւ միջազգայնօրէն ճանկար Արցախի Հանրապետութեան անկախութիւնը:

Երթին մասնակցեցան հարիւրաւոր անձեր, որոնք պաստառներ եւ դրօշակներ բարձրացուցին իրենց ինքնաշարժներէն՝ ինչեցնելով ազգային երգեր: Կազմակերպիչներէն մէկը ընթերցեց ցուցարարներուն պահանջները եւ ներկայացուց Արցախի մէջ տիրող իրավիճակը:

- Յունաստան ապրող բազմաթիւ հայեր իրենց բողոքը արտայայտեցին ընդդէմ Ազրայեյեանի եւ Թուրքիոյ՝ Արցախի եւ Հայաստանի դէմ սկսած ռազմական գործողութիւններուն: Անոնք 19 հոկտեմբերի առաւօտեան Ալեքսանդրուպոլիս



քաղաքի կեդրոնէն ինքնաշարժներով ուղղուեցան յոյն-թրքական անցակէտ, յետոյ քայլերթով փակեցին զայն:

Հայերն ու անոնց աջակցող օտարները ծածանեցին Հայաստանի եւ Արցախի դրօշները, վանկարկել՝ «Յաղթելու ենք», «Յաղթանակ, յաղթանակ, յաղթանակ»:

Անոնք բարձրացուցան պաստառներուն վրայ գրուած էր. «Արցախը ուժեղ է», «Լեռնային Ղարաբաղը արդէն անկախ է», «Խաղաղութիւն Արցախի մէջ»:

- 17 հոկտեմբերին Միացեալ Նահանգներու Փենսիլվանիա նահանգի Ֆիլադելֆիա քաղաքին մէջ գտնուող արուեստի թանգարանին մօտ բողոքի ցոյց կատարուեցաւ:



Յանուն Արցախի եւ Հայաստանի խաղաղութեան կազմակերպուած նախաձեռնութեան միացան նաեւ ամերիկացիներ:

Յոյցին մասնակիցները պահանջեցին ճանկար Արցախի անկախութիւնը: Անոնք պաստառներ կը կրէին հետեւեալ գրութիւններով. «Արցախը երկիր է, ոչ թէ տագնապ, ճանկար Արցախը», «Պաշտպանեցէք Արցախը, պաշտպանեցէք Հայաստանը»:

- Նորվեկիոյ հայ համայնքը բողոքի ցոյց կազմակերպեց ընդդէմ ազրայեյեանական յարձակումին: Հայկական համայնքի բողոքի ձայնը արտայայտուեցաւ ինչպէս լուս ցուցերով, այնպէս ալ հայրենիքին աջակցող ելոյթներով, հայրենասիրական երաժշտութեամբ: Յոյցին մասնակցեցան հարիւրաւոր անձեր՝ յստակ պահանջներով:

Կազմակերպիչները յայտնեցին, որ Նորվեկիոյ կառավարութեան 4 կէտերէ



բաղկացած պահանջներ ներկայացուցան են՝ դատապարտել Ազրայեյեանի յարձակումները Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի վրայ, պահանջել դադարեցնել բոլոր յարձակումները եւ նստիլ խաղաղ բանակցութիւններու սեղան, կանխել շրջանին մէջ լարուածութեան սրումը եւ լայնածիր բախումները:

Հայ համայնքին ակնկալութիւնն է նաեւ, որ Նորվեկիան աջակցի Հայաստանին՝ Եւրոպական խորհուրդին եւ այլ միջազգային կազմակերպութիւններուն մէջ՝ պատժամիջոցներ կիրարկելով Ազրայեյեանի եւ Թուրքիոյ նկատմամբ:

Նորվեկիոյ հայ համայնքի ներկայացուցիչները նաեւ կ'աշխատին տեղեկատուական դաշտին մէջ, փորձելով տեղւոյն լրատուամիջոցները իրագրելու Արցախի եւ Հայաստանի իրավիճակին մասին:

«ՈՒՍԻԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒ ԱԶՐԳԵՅՃԱՆԸ...»

Շարունակուած Ա. Էջէն

ընդունուած եւ գետնի վրայ իրավիճակի արմատապէս փոփոխութիւնը կանխարգիլած երկու փաստաթուղթերն են, որ անհրաժեշտ է կրակոցի դադարեցման պահպանման վերահսկողութեան մեքանիզմ ստեղծուի: Մենք այդ ուղղութեան աշխուժ կերպով կ'աշխատինք, նաեւ՝ մեր պաշտպանութեան նախարարութիւնը, նախ եւ առաջ Հայաստանէն եւ Ազրայեյեանէն մեր գործընկերներու հետ: Լիայոյս տե՛ս՝ ամենէն մօտիկ ապագային այդպիսի մեքանիզմի շուրջ համաձայնութիւն գոյացուի», ըսած է Լաւրով:

Ռուսական դիւանագիտութեան պետը ատկէ առաջ յայտարարած էր, որ անհրաժեշտ է վերջ տալ գիւտարական հռետորաբանութեան սրման ու դադարեցնել Լեռնային Ղարաբաղի մէջ գիւտարական գործողութիւնները:

«Վստահ ենք, որ հիմա ամենէն կարելորդ, եւ որ, հաւանաբար, մեծ քանք չի պահանջեր, կողմերուն միջեւ, ինչպէս նաեւ պատասխանատու միջազգային դերակատարներու միջոցով անյապաղ գիւտարական հռետորաբանութեան սրման դադարեցումն է: Յաջող անհրաժեշտ քայլը, որուն պետք է ձեռնարկուի գիւտարական հռետորաբանութեան սրման դադարեցման զուգահեռ, գիւտարական գործողութիւններուն, քաղաքային կառոյցներուն ուղղուած հարուածներուն վերջ տալն է», ընդգծած է Լաւրով:

«ՄՓԻՌ-ՔԵ ԿԱՐԵՒՈՐ ԴԵՐ...»

Շարունակուած Ա. Էջէն

կարելիութիւններով կոչուած է Արցախի ճանաչման դրօշը բարձր պահել: Արդարեւ, քաղաքներու, նահանգներու ու կազմակերպութիւններու կողմէ՛ ճանաչման գծով առնուած որեւէ քայլ իր կարելու Նպաստը կրնայ ունենայ միջազգային համայնքին կողմէ Արցախի անկախութեան ճանաչման մէջ»: Ապա ան թեալորեց առաջնորդ սրբազաններուն եւ ազգային իշխանութեանց ու յարակից մարմիններուն հետեւողական աշխատանք տանիլ Արցախի միջազգային ճանաչման գծով:

Վեհափառ միաժամանակ յիշեցուց, թէ՛ «գործնական բոլոր միջոցներով պետք է շարունակենք մեր ամբողջական ու անվերապահ աջակցութիւնը հայոց բանակին: Հայոց բանակը մեր հպարտութիւնն է, մեր ազգին ու հայրենիքին գոյութեան երաշխիքն է, բոլոր ճակատներու վրայ մեր հերոս տղաքը կը պայքարին գիշեր ու ցերեկ եւ պատրաստ են իրենց արիւնը թափելու Արցախի անկախութեան ի խնդիր»:

Վեհափառ հայրապետը նաեւ հոգեւոր պետերուն, միջեկեղեցական կառոյցներուն եւ կազմակերպութիւններուն հետ իր յարաբերութեանց ընթացքին կը շարունակէ կարեւորութեամբ անորդառնալ Արցախի ճանաչման հարցին:

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ Ս. ԵՒ ԱՆՍԱՀ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԿԱՐԳ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿԵՐԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՄ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ

Սուրբ Նշան մայր եկեղեցւոյ անուանակոչութեան տարեդարձին առիթով, կիրակի, 25 հոկտեմբեր 2020-ին պիտի պատարագէ եւ քարոզէ Թեմի բարեշնչան առաջնորդ՝

ԳԵՐՇ. ՏԵՐ ՇԱՀԷ ԱՐՔ. ՓԱՆՈՍԵԱՆ

Այս առիթով, սրբազան հօր ձեռամբ պիտի կատարուի նաեւ Պէյրութի Նաւահանգիստի պայտօմին իբրէն հետեւեալ վկաններ կրած Մայր եկեղեցւոյ օրհնութեան կարգը:

Սկիզբ Ս. պատարագի՝ ժամը 9:30 Սիրով կը իրավիքները մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու հոգեպարար արարողութեան:

ԴԻՄԱՆ ԱԶԳ. ԱՌԱՅՆՈՐԴԱՐԱՆԻ



«ԳՈՅԱՍՏԻՐՏԸ ՅԱՂԹԵԼՈՒ ԵՒՔ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՆԳԱՆԱՎՈՒԹԻՒՆ

- Հրայր Աղոյժնեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի՝ Տեր եւ տիկին Միսակ եւ Մարո Ներսէսեան 1.500.000 լ.ո.
- Տեր եւ տիկին Ժան-Փոլ եւ Վիրա Ներսէսեան 500.000 լ.ո.
- Տեր եւ տիկին Մարո եւ Թամար Ներսէսեան 500.000 լ.ո.
- Օրդ. Եսթեր Գաբրիէլեան 500.000 լ.ո.
- Համազգայինի Գեղարուեստի դպրոցներու ինքնակալութիւն 500.000 լ.ո.
- Տեր եւ տիկին Նազարեթ եւ Մարգրիտ Բէշիշեան 50\$
- Կարեն Խիտավերտեանի մահուան առիթով՝ Մարիա Երիզբեան 200.000 լ.ո.
- Դոկտ. Յարութիւն Սամուէլեանի մահուան առիթով Տեր եւ տիկին Նազարեթ եւ Մարգրիտ Բէշիշեան 50\$

«Ծորճի Սապունճեան» ընկերութիւն 250.000 լ.ո.

### ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԹԵԿՆԵՐՈՒ ՊԵՏՏՐՆ ԿԸ ԽՈՍՍԱՆԱՅ ԿԱՆԽԱՐԳԻԼԵԼ ԹՈՒՐԲԻՈՅ ԵՒ ՎԱՐՉՎԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻՆ



Միացյալ Նահանգներու նախագահի պաշտօնին եւ փոխնախագահի դեմոկրատական թեկնածուներ, նախկին փոխնախագահ ԾՕ Պայտըն եւ Ծերակուտական Զամալա Յարիս նախընտրական քարոզարշաւի ընթացքին յայտարարութեամբ մը ներկայացուցած են, թէ Պայտըն ինչ ըրած է հայկական հարցերու առնչութեամբ, եւ թէ Պայտըն-Յարիս վարչակազմը ինչ պիտի ընէ ընտրուելու պարագային: Այս մասին կը հաղորդէ «Ասպարէզ»-ը՝ մէջբերելով յայտարարութիւնը, որմէ երկու օր առաջ Պայտընն ու Յարիսը անդրադարձած էին Ղարաբաղեան տագնապին եւ խաղաղ լուծման կոչ ուղղած:

«ԾՕ Պայտընի աջակցութիւնը հայ ժողովուրդին» խորագիրով յայտարարութեան մէջ՝ անդրադառնալով Պայտընի ապագայ ընելիքներուն, կը նշուի, որ ան պիտի ճանչնայ Յայոց ցեղասպանութիւնը, եւ մարդու ընդհանուր իրաւունքները պիտի դարձնէ իր վարչակազմի առաջնահերթութիւններէն, որպէսզի այդպիսի ողբերգութիւններ այլեւս չըլլան: Կը նշուի նաեւ, որ Պայտըն պիտի ուժեղացնէ Միացեալ Նահանգներ-Յայաստան յարաբերութիւնները՝ բարելաւելու համար հայ ժողովուրդին կեանքը: Պայտըն պիտի աջակցի տարածաշրջանին մէջ մնալու խաղաղութեան հաստատման՝ աշխուժացնելով Միացեալ Նահանգներու մասնակցութիւնը Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման հոլովոյթին, պիտի փնտնէ նաեւ լրացուցիչ միջազգային հսկիչներ՝ զինադադարի դրութեան վերահսկելու համար:

Կը շեշտուի նաեւ, որ Պայտըն պիտի աշխատի կանխարգիլելու երրորդ կողմերու, ներառեալ միջամտութիւնը Թուրքիոյ նման պետութիւններու եւ օտարերկրեայ վարձկաններու, որոնք կը վարձատրուին Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին դէմ յանցագործութիւններ կատարելու համար:

Ան ամբողջովին կը զօրակցի Յայաստանին՝ Միացեալ Նահանգներու աջակցութեան շարունակութեան, ժողովրդավարական կառավարումը ամրապնդելու եւ տնտեսական աճը խթանելու համար, եւ վերատեսչութեան պիտի ենթարկէ Ազրայէճանին անվճար տանգութեան նպատակով տրամադրուող աջակցութիւնը՝ համոզուելու համար, որ ատիկա պիտի չօգտագործուի յարձակողական նպատակներով: Կը նշուի նաեւ, որ ան պիտի շարունակէ մարդասիրական ականազերծման երկարաժամկետ օգնութիւնը Լեռնային Ղարաբաղի մէջ բան մը, որ Թրամի փորձած է կասեցնել: Պայտըն նաեւ պիտի դատապարտէ ատելութեան ենթահողէ մեկնած ամերիկահայերու դէմ կատարուած յանցագործութիւնները:

### ՓՈՍՓԷՕ ՌԻԱԶԻՆԿԹԵՐԻ ՄԵՋ...

Շարունակուած Ա. Էջէն

Կը նշուի, որ ամերիկեան դիւանագիտութեան պետը նախ պիտի հանդիպի Ազրայէճանի արտաքին գործոց նախարար Ժեյտուն Պարաճանի հետ, որմէ ետք տեղի պիտի ունենայ Փոսփէոյի հանդիպումը Յայաստանի արտաքին գործոց նախարար Չոհրապ Մնացականեանի հետ:

Կը հաղորդուի, որ Միացեալ Նահանգներու Ազրայէճանի դեսպան Էլին Սուլեյմանով չէ բացառած Ռաշիսկընի մէջ Յայաստանի եւ Ազրայէճանի արտաքին գործոց նախարարներու հանդիպման հնարաւորութիւնը:

Կայքը կ'աւելցնէ, որ Յայաստանի եւ Ազրայէճանի արտաքին գործոց նախարարներու՝ Նոյն Օրը Ռաշիսկընի այցելելը կը վկայէ այն մասին, որ Միացեալ Նահանգներ կ'աշխուժացնեն Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գոտիին մէջ լարուածութիւնը մեղմացնելու ջանքերը:

Նախապէս Միացեալ Նահանգներու մէջ Յայաստանի դեսպան Վարուժան Լերսետեան «Տը Գիլ»-ի յայտնած էր, որ աշխատանքներ կը տարուին Յայաստանի արտաքին գործոց նախարարի Ռաշիսկընի այցելութիւնը նախապատրաստելու ուղղութեամբ:

### «ՀԱՅԵՐԸ ԼԱՒ ՄԱՐԴԻԿ ԵՆ...»

Շարունակուած Ա. Էջէն

Նկատմամբ: Պիտի աշխատիքը որոշ ուղղութիւններով:

Նախքան այդ, հազարաւոր ամերիկահայ ցուցարարներ նախագահ Թրամիի բազմաթիւ աշակիցներուն հետ հաւաքուած էին Զախիֆորնիոյ Նիւհորթ Պիչ քաղաքի փողոցներուն մէջ՝ մասնաւոր հանգանակութեան մասնակցելու նպատակով այդ վայրը ժամանող Թրամիին իրենց բողոքի ձայնը հասցնելու նպատակով:

«Եռու. Փի. Այ.» կայքին փոխանցմամբ՝ ամերիկահայերը պատահաբար պարզած են՝ փորձելով ուշադրութիւն հրահարել Արցախի մէջ ընթացող պատերազմին վրայ եւ պահանջած դադարեցնել Թուրքիոյ եւ Ազրայէճանի ելեւմական աջակցութեան տրամադրումն ու զենքի վաճառքը:

### ԹՈՒՐԵ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ՄԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԿՈՉ ՈՒՂՂԱԾ Ե ԾԱՆՉԱԼՈՒ ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ



«Յեղասպանութեան հակառակորդներու միութեան» նախագահ Ալի Էրթեմ, որ ազգութեամբ թուրք է եւ ներկայիս կը բնակի Գերմանիա, Լեռնային Ղարաբաղի տագնապի սրման լոյսին տակ Շթութարի մէջ մասնակցած է հայ համայնքին կազմակերպած ցոյցին, որուն ընթացքին հանդէս եկած է հայերու երկրորդ ցեղասպանութիւնը կանխարգիլելու եւ Արցախի հանրապետութիւնը ճանջալալու կոչերով:

Թուրք մտաւորականը այս մասին գրած է իր դիմաւորութեան էջին վրայ: Էրթեմ նշած է, որ Ազրայէճան լայնածաւալ յարձակումի սկսած է Արցախի Յանրապետութեան դէմ՝ իր նպատակին հասնելու համար օգտագործելով Թուրքիոյ կողմէ Սուրիոյ մէջ հաւաքուած ժիհադական ահաբեկչական խումբերու վարձկանները:

Անոր համաձայն, յարձակումին նպատակը Արցախի ժողովուրդը ազատութենէ զրկելն է, ինչպէս նաեւ՝ տարածաշրջանին մէջ կայունութեան ու խաղաղութեան ջնջումը: Թուրք մտաւորականը նաեւ խօսած է թուրքերու եւ ազրայէճանցիներու կողմէ խաղաղ բնակավայրերու վրայ յարձակումներուն մասին՝ ընդգծելով, որ ատիկա կը հակառէ ժընեւի ուխտին եւ Մարդու իրաւունքներու ուխտի արժեքափութումը:

Ան ԵԱԿԿ-ի Միւսքի խմբակին, միջազգային ընտանիքին, աշխարհի կառավարութիւններուն, մարդու իրաւունքներու պաշտպանութեամբ թափուող կազմակերպութիւններուն կոչ ուղղած է՝ ջանքեր գործադրելու Արցախի եւ Յայաստանի վրայ զինեալ յարձակումը անմիջապէս կանգնեցնելու ուղղութեամբ:

### «ԹՈՒՐԲԻՈՅ ԿՈՂՄԵ «ԵՍ-400»-Ի ՓՈՐՉԱՐԿՈՒՄԸ ԿՐՆԱՅ ԼՈՒՐՋ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ՌԻՆԵՆԱԼ»

ԿԸՍԵ ՌԻԱԶԻՆԿԹԵՐ

Ռաշիսկըն Թուրքիան նախագաւազուցուցած է, ի հեճուկս Միացեալ Նահանգներու եւ ՕԹԱՆ-ի, Ռուսիայէն ձեռք բերուած «Ես-400» հակաօդային պաշտպանութեան համակարգերու փորձարկման հարցով: Այս մասին կը հաղորդէ «Արաբիա»-ն՝ յիշեցնելով, որ ուրբաթ օր Թուրքիոյ սեծովեան ափէն, ուր տեղի կ'ունենայ «Ես-400»-ի փորձարկումը, երկինք արծակուած է իրթիւն մը:

«Եթէ տեղեկութիւնը հաստատուի, մենք խստագոյն ձեռով պիտի դատապարտենք «Ես-400»-ի փորձարկումը, ինչ որ անհամատեղելի է Թուրքիոյ՝ իբրեւ ՕԹԱՆ-ի դաշնակից եւ Միացեալ Նահանգներու ռազմավարական գործընկեր ստանձնած պարտաւորութիւններուն», յայտարարած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբեր Սորկըն Օրթապուր:

Ան աւելցուցած է, որ Միացեալ Նահանգներ տեղեկ են շրջան ընդ լուրերէն, որ Ռաշիսկըն բարձրագոյն մակարդակներով թրջական կառավարութեան յայտնած է, թէ ռուսական համակարգերու գնումը անընդունելի է:

«Միացեալ Նահանգներ յստակ են իրենց ակնկալիքներուն մէջ առ այն, որ «Ես-400» համակարգը պետք չէ գործառնութեան դրուի: Բացի ատկէ, մենք լըստակ նշած ենք, որ Թուրքիոյ կողմէ համակարգի աշխուժացման պարագային, անվտանգութեան ոլորտին մէջ մեր յարաբերութիւններուն համար կրնան լուրջ հետեւանքներ ըլլալ», եզրափակած է բանբերը:

### ԱՂՈԹՔՆ ՈՒ...

Շարունակուած 3-րդ էջէն

Քրիստոսի Սօր աղօթող ու պայքարող գաւազներուն քնն:

Գիտնաբարձր...: Երէկ, ոչ միայն շատ զարմացալ, այլ նաեւ արտասովորաբար յուզուեցալ, երբ լսեցի լրատու հաղորդագրութեան մը, որուն մէջ հայրենի թղթակիցը համոզուած շեշտով կը պատճառաբանէ, թէ յաղթութիւնը մերն է: Իր ըսածին համար կրնուի տայ պատճառները: Անոնց վերջինը, որով կ'աւարտէ իր տեղեկագրութիւնը, այս յստակ ու պարզ դաւանումն է. «Յարթելու ենք, որովհետեւ մենք գաւազներն ենք Աստուծամօր»:

Ստուգիլ, «յարթելու ենք, որովհետեւ մենք գաւազներն ենք Աստուծամօր»:

Յիմա, անծանօթ թղթակիցին եւ ինծի օգնութեան կը հասնի աղօթող ու պայքարող հայերու ոգին թէ՛ խորհրդրդնալով, եւ թէ կերտող Սեբաստացի Մխիթար Աբբահայրը (1676-1749), մեծագոյն ազգաստեղծ գլխատառ Մին, ծաղկ կը հաստատէ, որ Մարիամ՝ հայրենի Սեւանակողիին Տիրամայրը պաշտպան է այն ազգին, մեր ազգին, որուն գաւազները կը մեծարեն Չինքը Ս. վարդաբանով:

Արդ, միշտ եւ մանաւանդ այսօր յիշե՛նք, թէ մարտասեր հայերս եղած ենք առաջին վարդաբանասացներն արեւելքին:

Տեսա՞ր գանոնք՝ արի կեցուածքով, ժպտուն դիմագիծով, գրաւիչ գեղեցկութեամբ, համոզուած աջքներով ու հրաւիր լուրերով, ինչպէս նաեւ երգով, մայրապետով ու պարով...: Անոնց օգնութեան հասնի՞նք, այո՛, Մարիամի՛ Քրիստոսի Սօր առաջնորդութեամբ, բայց նաեւ մեր աղօթելով, մեր հսկելով, մեր գոհաբերելով, մեր մասնակցելով Ս. պատարագին եւ մեր ըսելով Ս. Վարդաբանը:

### ԹՈՒՐԲԻԱ ՊԱՏՐԱՍՏ Ե ՄԻԱՆԱԼՈՒ «ԲՈՆԱԳՐԱՌՈՒՄԸ» ԽՐԻՄԻ ԱՊԱՇՏԱՓՈՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻՆ

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան յայտարարած է, որ Անգարան պատրաստ է մասնակցելու «բռնագրաւուած» Խրիմի ապաշրջափակման վերաբերեալ հարթակին: Թրքական կողմը մտադիր է աշխուժ մասնակցութիւն ունենալ բանակցային հոլովոյթին: Ռուսական «Ինոսմի» կայքը կը հաղորդէ, որ այս մասին յայտնած է Ռուքանիոյ նախագահ Վլատիմիր Չելսեսքին՝ իր թուրք պաշտօնակից Ռեճեփ Թայիփ Էրտողանի հետ տուած մամուլի միացեալ ասուլիսին ընթացքին:

Չելսեսքիի համաձայն, ինք Էրտողանը իրաւորած է մասնակցելու Խրիմի ապաշրջափակման վերաբերեալ հարթակին, եւ Թուրքիոյ նախագահը պատրաստակամութիւն յայտնած է աջակցելու նոր բանակցային ձեւաչափին:

«Ես Թուրքիան իրաւորած եմ միանալու Խրիմեան հարթակին: Ատիկա խրիմցիներու իրաւունքներու պաշտպանութեան եւ թերակողմի ապաշրջափակման գործիք է: Ընդհանրապէս ձեռք, պարուն նախագահ, որ պատրաստ էք աջակցելու եւ ըլլալու աշխուժ մասնակից», ընդգծած է Ռուքանիոյ նախագահը:

Չելսեսքիի նախապէս յայտարարած էր, որ Թուրքիան կրնայ լուրջ դերակատարութիւն ունենալ Խրիմը Ռուքանիոյ կազմ վերադարձնելու հոլովոյթին մէջ, այդ պատճառով ալ Քիւեղ մտադիր է Անգարային առաջարկել մասնակցիլ Խրիմեան հարթակին:

### ՓՈՒՇԵՈՎ. «ՌՈՒՍԻԱՆ ԵՒ ԹՈՒՐԲԻԱՆ ՈԱՅՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ԶԵՆ»

Ռուսիոյ դաշնակցային խորհուրդի՝ տեղեկատուական քաղաքականութեան հարցերով յանձնախումբի նախագահ Ալեքսէյ Փուշըով իր թելեկրամեան ալիքին վրայ գրած է, որ Թուրքիոյ նախագահի Խրիմը ռուսական տարածք ճանաչելու մասին յայտարարութիւնը անգամ մը ես կը վկայէ, որ Ռուսիան եւ Թուրքիան ռազմավարական գործընկերներ չեն: Այս մասին կը հաղորդէ «Ի.Էյ.տեյլի» կայքը:

Վերջինիս համակարծիք է Ռուսիոյ պետական Տումայի միջազգային հարցերով յանձնախումբի փոխնախագահ Ալեքսէյ Չեփան: Ան նշած է, որ Էրտողանի «Ռուքանիոյ տարածքային ամբողջականութեան աջակցելու», ներառեալ Խրիմի մասին խօսքերը ոչ մէկ ձեռով կրնան ազդել այն իրողութեան վրայ, որ տուեալ շրջանը Ռուսիոյ մաս կը կազմէ:

Չեփա ընդգծած է, որ Թուրքիոյ նախագահի ճիշդ այսպիսի յայտարարութիւնները ցոյց կու տան անոր՝ Ռուսիոյ գործընկեր ըլլալու «լուսալիութիւնը»: Անոր համաձայն, Էրտողանի դիրքորոշումը ոչ մէկ սպառնալիք կը ներկայացնէ Ռուսիոյ համար եւ թելադրուած եղած է ակնթարթային նկատառումները:

### ԵՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԵԼՈՒ ԿԱՐԵՒՐ ՆԿԱՍԱԾ Ե ՏԱԳՆԱԳԻ ԳՕՏԻՆ ՄԵՋ ՄԱՐՈՒ ԻՐԱՌՈՒՆՔՆԵՐԸ ՅԱՐԳԵԼՈՒ ԱՆՋՐԱԾԵՆՏՈՒԹԻՒՆԸ

Երոպական խորհուրդի ընդհանուր քարտուղար Մարիա Փելչինսկայա-Պուրիչ շեշտած է Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման անհրաժեշտութիւնը: Այս մասին կը հաղորդէ ԹՎԱՍ-ը:

«Յայաստանն ու Ազրայէճանը Երոպական խորհուրդի անդամ են: Երկու երկիրներն ալ մեր կազմակերպութեան առջեւ ստանձնած են պարտաւորութիւններ՝ խաղաղ ճամբով լուծելու այս տագնապը: Եւ երկու երկիրներն ալ պարտաւոր են պահպանել Մարդու իրաւունքներու երոպական ուխտը: Այս տարածքին մէջ մարդու իրաւունքները յարգելը կենսականօրէն կարեւոր եւ իրաւական պարտաւորութիւն է», ըսած է Երոպական խորհուրդի ընդհանուր քարտուղարը:

Ան նշած է, որ, անկախ քաղաքականութենէն, տագնապի գոտիին մէջ ապրող մարդիկ պետք է պահուող իրաւունքներու, ժողովրդավարութեան եւ օրէնքի գերակայութեան լոյս չափանիշներուն, ինչպէս Երոպայի մէջ ունէ մէկը:

Երոպական խորհուրդի ընդհանուր քարտուղարը աւելցուցած է, որ հակամարտութիւններու եւ տարածքային վեճերու լուծումը իրենց կազմակերպութեան լիազօրութիւններէն դուրս է: Այնուամենայնիւ, ան շեշտած է, որ այս պաշտօնին մէջ իր լիազօրութիւններու առաջնահերթութիւններէն դարձած է այդ տարածքներու մէջ մարդու իրաւունքներու պահպանման խնդիրը կարգաւորումը:

